ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՉԱՆԹԻԿՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քրիստոնեական Եկեղեցու դավանանքի դրույթները, ծիսական համակարգի արարողությունները, դոգմատիկ բանաձեւումներն ու եկեղեցական խորհուրդները անցել են պատմական երկարատեւ զարգացման ուղի:

Ըստ Գրիգոր Տաթեւացու՝ «Խորհուրդ է ծածկելոյ իրաց յայտնութիւն», այսինքն՝ խորհուրդը թաքնված, քողարկված իրողությունների բացահայտումն է[1]: Խորհուրդները եկեղեցական այն արարողություններն են, որոնց միջոցով հավատացյալներն ընդունում են Սուրբ Հոգու շնորհները, այլ խոսքով՝ խորհուրդների միջոցով քրիստոնյան հարաբերության մեջ է մտնում անտեսանելի ու անշոշափելի, սակայն գոյություն ունեցող հոգեւոր իրողությունների հետ՝ տեսանելի արարքների, անձանց եւ լսելի խոսքերի միջոցով: Գերբնականն ու աստվածայինը խորհրդակատարության ժամանակ նյութեղեն եւ տեսանելի իրերի միջոցով մոտենում են մարդուն:

Արշակ Տեր-Միքելյանը հետեւյալ բառերով է սահմանում խորհուրդ եզրը. «Եկեղեցու Սուրբ Խորհուրդ կոչում ենք Եկեղեցու վարդապետութեան այն արարողական մասը եւ աստուածապաշտութեան այն կատարեալ արարողութիւնը, որով իրապէս իւրաքանչիւր ոք նախ՝ Քրիստոսի եւ Եկեղեցու իսկական եւ միակից անդամն է ճանաչւում եւ այն խոստովանում, եւ երկրորդ՝ իրականապէս թէ՛ իբրեւ անհատ եւ թէ՛ իբրեւ համայնքի անդամ, մտնում է Քրիստոսի ամենամտերիմ եւ էական հաղորդակցութեան մէջ մնում, ամրանում եւ շնորհներ վայելում»[2]:

Խորհուրդներով Սուրբ Հոգու անտեսանելի եւ աննյութական շնորհներն ու պարգեւները տեսանելի արարքներով փոխանցվում են հավատացյալին՝ նրան վերածելով Սուրբ Հոգու տաճարի: Խորհուրդներին մասնակցելիս պետք է ունենալ անկեղծ եւ աներեր հավատք, քանզի հավատքն է, որ մեզ արժանի է դարձնում Ս. Հոգու շնորհներին: Այս մասին Եղիշե պատմիչը գրում է. «Որպէս դժուարագոյն է կեալ ջրայնոց ի ցամաքի եւ ցամաքայնոց ի ջուր, առաւել եւս դժուարագոյն է առանց հաւատոյ ընդունիլ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ»[3]:

Դարերի ընթացքում խորհուրդների արարողակարգը կատարելագործվել է, գրվել են աղոթքներ, քարոզներ, ճառեր, շարականներ:

Արդեն իսկ Հին Կտակարանում արտացոլված է մեղքի համար զղջալու, կատարած հանցանքի դիմաց որոշակի պատիժ կրելու սովորույթը: Եկեղեցու նշանավոր հայրեր Ամբ-

1 **Գրիգոր Տաթեւացի**, Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 199:
2 **Արշակ Տէր Միքէլեան**, Հայաստանեայց Եկեղեցւոյ քրիստոնէականը, Վաղարշապատ, 1900, էջ 363:
3 **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1989, էջ 313:

բոսիոսը, Օգոստինոսն ու Հովհան Ոսկեբերանը որպես խոստովանության առաջին դեպք նկատում են Ադամի եւ Եւայի խոստովանանքը Աստծուն. վերջիններս գիտակցեցին իրենց անհնազանդությունը, իրապես զղջացին եւ Տիրոջը խոստովանեցին իրենց մեղքը[4]: Աստված նույնիսկ եղբայրասպան Կայենին զղջման եւ խոստովանության հնարավորություն տվեց, սակայն վերջինս չընդունեց սեփական մեղքը, իրապես չզղջաց եւ չխոստովանեց, այդ իսկ պատճառով Տերը երես թեքեց նրանից եւ ներման չարժանացրեց[5]:

Հին Ուխտում ապաշխարանքը հիմնականում դրսեւորվում էր զղջման եւ մեղանչումի փոխարեն զոհի մատուցման ձեւով. «Նա, ով խոստանայ չար կամ բարի գործ կատարել եւ այդ խոստումը հաստատի երդմամբ, եւ եթէ նա մոռանայ, իսկ յետոյ յիշի այդ, միեւնոյն է, նա մեղանչած է լինում: Նա պէտք է խոստովանի իր մեղքերը: Տիրոջ նկատմամբ կատարած իր յանցանքների ու գործած մեղքերի համար նա հօտից մի էգ գառ կամ մի էգ ոլ թող զոհ մատուցի: Քահանան դրանով քաւութիւն պիտի տայ նրա մեղքերին, եւ նա թողութիւն պիտի ստանայ»[6]:

Տվյալ ժամանակաշրջանում եւ պատմամշակութային այդ միջավայրում ապրողները հստակ գիտակցում էին ապաշխարանքի կարեւորությունը: Այդ են վկայում հինկտակարանյան բազմաթիվ հատվածներ. «Մեղքերս քեզ ցոյց կը տամ, եւ անօրէնութիւնս չեմ ծածկի քեզանից: Ասացի, թէ կը խոստովանեմ մեղքերն իմ, եւ դու թողութիւն կը տաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտութեանը»[7]: Չնայած Դավիթ թագավորը ուներ իշխանություն, հարստություն, փառք, միեւնույն է գիտակցում էր սեփական մեղքերը՝ «...եթէ երբեւէ իմ չարակամներին չարութեամբ եմ հատուցել, թող ես էլ խպառ կորչեմ թշնամիներիս ձեռքով»[8]: Նա Աստծո գթասրտությունն ու ողորմածությունն էր հայցում՝ հուսալով ներում գտնել. «Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի հիվանդ եմ ես, բժշկի՛ր ինձ, քանզի ոսկորներս խախտուել են: Անձն իմ յոյժ խռոված է...Դարձի՛ր, Տէ՛ր, փրկի՛ր ինձ, ազատի՛ր ինձ, Տէ՛ր, քո ողորմութեամբ»[9]:

Երբ մեղանչում ենք, ընկնում ենք չարի որոգայթը, դառնում «չարի ծառան»: Իսկ Աստված անսահման սեր եւ բարություն է, ինչն էլ թույլ է տալիս մեզ հուսալու, որ մեր մեղքերը, հանցանքները ներված կլինեն, եւ Տիրոջ անսպառ ողորմածությունը կպարուրի մեզ.«Շատ են մեղաւորների տանջանքները, բայց ովքեր իրենց յոյսը դրել են Տիրոջ վրայ, Տիրոջ ողորմութիւնը կը պարուրի նրանց»[10]:

Սաղմոսաց գրքի Ծ սաղմոսը կոչվում է «Ապաշխարութեան աղօթք», որտեղ Դավիթը գիտակցում է սեփական մեղքերի ծանրությունը, զղջում եւ աղոթում Աստծո ներողամտությանը արժանանալու համար. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, քո մեծ ողորմութեամբ եւ քո գթառատութեամբ ջնջի՛ր իմ յանցանքները: Առաւել եւս լուա՛ ինձ իմ անօրէնութիւնից եւ իմ մեղքերից մաքրի՛ր ինձ: Իմ անօրէնութիւններս ես ինքս գիտեմ, եւ մեղքերն իմ միշտ իմ առջեւ են»[11]:

Ապաշխարողը փորձում է դուրս գալ անկյալ վիճակից, հնազանդվել Աստծուն եւ վե-

4Տե՛ս Ծնող. Գ:
5 Տե՛ս Ծնող. Դ:
6 Ղեւտ. Ե 4-6:
7 Սաղմ. ԼԱ 5-6:
8 Սաղմ. Է 5-6:
9 Սաղմ. Զ 3-4:
10 Սաղմ. ԼԱ 10-11:
11 Սաղմ. Ծ 3-5:

բականգնել հավատարմությունը Նրա նկատմամբ. «Մի՛ լքիր ինձ, Տէ՛ր իմ Աստուած, եւ մի՛ հեռացիր ինձնից: Ո՛ւշ դարձրու, որ ինձ օգնես, ո՛վ իմ փրկիչ Տէ՛ր»[12] կամ «Առաւօտեան քո ողորմութիւնն ինձ լսելի՛ դարձրու, քանզի յոյսս քեզ վրայ դրի. ցո՛յց փուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ...»[13] :

Եսայի մարգարեն, իր ժամանակաշրջանի արատավոր բարքերի ականատեսը լինելով, ապաշխարանքի եւ խոստովանության մասին գրում է. «...նախ դու խոստովանի՛ր քո անօրէնութիւնները, որ արդարացուես»[14]: Մարգարեն ընդգծում է, որ առանց անկեղծ զղջման եւ խոստովանության արդարացում չի կարող լինել:

Իսկ Հովել մարգարեն կոչ էր անում մարդկանց հրաժարվել մեղքերից, եւ կանգնել կործանման տանող ճանապարհից, լսել Աստծո պատվիրաններն ու ապաշխարել.

«Եւ արդ,- ասում է ձեր Տէր Աստուածը,- դարձէ՛ք ինձ ձեր ամբողջ սրտով, ծոմապահութեամբ, լալով ու կոծելով: Ձեր սրտե՛րը պատռեցէք եւ ոչ թէ ձեր հագուստները: Այո՛, դարձէ՛ք ձեր Տէր Աստծուն, որովհետեւ նա ողորմած է եւ գթասիրտ, համբերատար եւ բազմողորմ եւ ափսոսում է մարդկանց չարիքների համար»[15]:

Հին Կտակարանի մյուս գրքերում եւս արտացոլված է մեղքերին թողություն տալու, հանցանքները ներելու գաղափարը: Ըստ մարգարեական մեկնությունների՝ աստվածային ողորմածությունը անսահման է, իսկ Աստված՝ ներողամիտ Հայր, որը սիրով ու գորովանքով սպասում է իր մեղավոր զավակների դարձին. այս մասին Եզեկիել մարգարեն ասում է. «Անօրէնը եթէ յետ կանգնի իր գործած անօրէնութիւններից ու պահի իմ բոլոր պատուիրանները, արդարութիւն գործի ու ողորմածութիւն անի,- ապրելով ապրելու է ու չի մեռնելու: Նրա գործած բոլոր մեղքերը, կատարած բոլոր անիրաւութիւնները չեն յիշուելու, այլ իր գործած արդարութեան համար նա ապրելու է: Մի՞թէ ես մեղաւորի մահն եմ փենչում,- ասում է Տէր Աստուածը,- եւ ոչ թէ այն, որ նա չար ճանապարհից յետ դառնայ ու ապրի»[16]:

Հին Կտակարանում հանդիպում ենք նաեւ գաղտնի կամ առանձնական խոստովանությանը եւ փոխհատուցմանը վերաբերող աստվածային հրահանգների: Այսպես՝ Թվոց գրքում գրված է. «Այն տղամարդը կամ կինը, որ մարդկային որեւէ մեղք է գործում, խիստ արհամարհած կը լինի Տիրոջը եւ յանցանք գործած կը լինի: Թող նա խոստովանի իր մեղքերը, թող լրիւ հատուցի նրան, ում վնաս է պատճառել եւ վնասի մէկ հինգերորդ մասն էլ աւելացնի հատուցածի վրայ»[17]:

Իսկ Առակաց գրքում մեկ անգամ եւս ընդգծվում է ապաշխարության եւ անկեղծ զղջման անհրաժեշտությունը, քանզի. «...ամբարշտութիւնը ծածկողը յաջողութիւն չի ունենայ, բայց բացայայտողը եւ իրեն պահարակողը կը դառնայ սիրելի»[18]:

Սիրաքը հորդորում էր մեղավորներին ապաշխարել, սիրել իմաստությունը եւ քայլել աստվածահաճ ճանապարհով[19]: Ղեւտացվոց գրքում Աստված պատվիրում է մեղքերը

12 Սաղմ. ԼԷ 22-23:
13 Սաղմ. ՃԽԲ 8:
14 Եսայի ԽԳ 26:
15 Հովել Բ 12-14:
16 Եզեկ. ԺԸ 21-24:
17 Թվոց. Ե 6-7:
18 Առակ. ԻԸ 13:
19 Տես Սիրաք. Դ 13:

մանրամասնորեն պատմել քահանային, որպեսզի վերջինս կարողանա մեղքին համապատասխան զոհը որոշել: Այս հատվածի ընթերցումից կարելի է եզրակացնել, որ քահանան պետք է տեղյակ լիներ ոչ միայն զոհած մեղքի մասին, այլ նաեւ՝ ինչպիսի հանգամանքներում, գիտակցաբար թե անգիտության հետեւանքով է այն կատարվել[20]: Մեղավորը, ամոթի զգացումը հաղթահարելով, պետք է պատմեր իր բոլոր արատավոր արարքների մասին, որպեսզի թողություն գտներ: Այս ամենը վկայում են, որ խոստովանանքը եւ ապաշխարությունը հրեաների համար աստվածային հրաման, պատվեր էր[21]: Վերոնշյալ հատվածները հաստատում են, որ Հին Կտակարանում նշմարվում են այն հիմնական դրույթները, որոնք հետագայում հիմք հանդիսացան Ապաշխարության խորհրդի ձեւավորման համար: Ապաշխարության եւ խոստովանանքի այս սովորությունը հրեաների մեջ պահպանվում է մինչեւ Հիսուս Քրիստոսի ծնունդը: Այդ է վկայում Մատթեոսի Ավետարանը, որտեղ նկարագրվում է, թե ինչպես էր Հովհաննես Մկրտիչը մարդկանց նախապատրաստում Մեսիայի գալստյանը՝ մկրտելով եւ մեղքերի խոստովանությունը լսելով. «...մկրտում էին նրանից Յորդանան գետում եւ խոստովանում էին իրենց մեղքերը»[22]:

Նոր Կտակարանում Փրկիչը հիմնավորեց ապաշխարության անհրաժեշտությունը, եւ «ապաշխարանքի գաղափարը» հետագայում վերածվեց համաքրիստոնեական խորհուրդի, որին առավել ամբողջական եւ համակարգված տեսք տվեցին եկեղեցական նշանավոր հայրերը: Քրիստոս եկավ մեզ մեղքի տիրապետությունից ազատագրելու եւ ապաշխարության ճանապարհով աստվածային արքայությանը արժանացնելու:Նա հորդորում էր ապաշխարել եւ սովորեցնում իր աշակերտներին, թե ինչպես պետք է ներում շնորհել խոստովանողներին[23]: Աստծո Որդին ապաշխարության հինկտակարանյան ընկալման փոխարեն տվեց նոր մեկնություն. «Գնացէք, սովորեցէք, թէ ինչ է նշանակում՝ ողորմութիւն եմ կամենում եւ ոչ՝ զոհ. քանզի ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին»[24]: Այս խոսքերով Մեսիան արժեւորում էր ներքին, հոգեւոր ապաշխարանքը, իրական զղջումն ու անկեղծ խոստովանությունը, ողորմածությունը, իսկ մատուցվող զոհի տեսակն ու չափը կորցնում էին իրենց կարեւորությունը:

Քրիստոսը ցանկանում էր ապաշխարության միջոցով մեղսավոր մարդուն վերականգնել անկյալ վիճակից եւ նրան Աստծո հետ հաշտեցնել: Աստծո Որդին, որ ամենքի փրկությունն էր ցանկանում, ապաշխարությունը մեծագույն սիրով հաստատեց, որպեսզի մեղքերով ծանրաբեռնված հավատացյալը կարողանա կրկին աստվածային շնորհներին արժանանալ եւ փրկություն գտնել: Նոր Կտակարանի բազմաթիվ հատվածներ վկայում են, որ իրապես զղջացողները հաստատուն հավատքով դիմում էին Քրիստոսին, խոստովանում եւ մեղքերի թողություն ստանում[25]: Փրկիչն աստվածային իր զորությամբ «բժշկում էր» նրանց՝ մեղքերից արձակելով:

Մեջբերենք նաեւ նորկտակարանյան որոշ հատվածներ, որոնք պալիս են Ապաշխա-

20 Տես Ղեւտ. Ե 17-19:
21 Տես **Ն. Թերճիմանեան**, Խորհրդական Խոստովանութիւն, Վենետիկ, 1873, էջ 5:
22 Մատթ. Գ 6:
23 Տես Մարկ. Ա 5:
24 Մատթ. Թ 13:
25 Տես Ղուկ. Է 47-48:

բության խորհրդի ապրվածաբանական հիմնավորումը: Մատթեոսի Ավետարանում ընթերցում ենք Քրիստոսի քարոզը. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկնքի արքայութիւնը մօտեցել է»[26]: Քրիստոսն ընդգծում էր, որ Հայրն իր անսահման սիրով եւ գթառատությամբ հոգ է տանում մեղսավորների, մոլորյալների փրկության մասին, սպասում նրանց դարձի գալուն. «Ձեզ ինչպէ՞ս է թւում. եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, եւ նրանցից մէկը մոլորուի, իննսունինը ոչխարը լերան վրայ չի՞ թողնի ու գնայ որոնելու մոլորուածին: Եւ եթէ պատահի, որ այն գտնի, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ նրա վրայ աւելի կ՚ուրախանայ, քան իննսունինների վրայ, որ մոլորուած չեն»[27]:

Մարկոսի Ավետարանում եւս շեշտադրվում է Ավետարանի նկատմամբ հավատը եւ ապաշխարանքի անհրաժեշտությունը. «Ժամանակը հասել է, եւ մօտեցել է Աստծու արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»[28]:

Իսկ Ղուկասի Ավետարանի ԺԳ գլուխը վերնագրված է «Կոչ ապաշխարութեան», որտեղ Աստծո Որդին հորդորում է զղջալ, ապաշխարել եւ զգուշացնում, որ չապաշխարողները կորստյան կմատնվեն. «Ո՛չ, ասում եմ ձեզ, սակայն, եթէ չապաշխարէք, ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորչէք»[29]:

Մարդ արարածը բազմիցս կամա թե ակամա, ուղղակի կամ անուղղակի մեղքի իշխանության տակ է ընկնում, Աստծո կամքին հակառակ ընթանում, կյանքի դառն փորձություններին ենթարկվում եւ ի հետեւանք այս ամենի կորստյան դատապարտվում, քանզի մեղքի վարձքը մահն է. «...քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Քրիստոս Հիսուսի միջոցով»[30]:

Փորձությունները Աստծուց չեն, եւ Աստված չէ, որ մեզ փորձությունների է ենթարկում: Այս մասին Հակոբոս առաքյալն ասում է. «Ոչ ոք, երբ փորձութեան մէջ լինի, թող չասի. «Աստծուց եմ փորձւում», քանի որ Աստուած չարից չի փորձւում եւ ինքն էլ չի փորձում ոչ ոքի: Իւրաքանչիւր ոք փորձւում է՝ հրապուրուելով եւ խաբուելով իր ցանկութիւններից: Այնուհետեւ ցանկութիւնը, յղանալով, մեղք է ծնում, եւ մեղքը, հասունանալով, մահ է ծնում»[31]: Սակայն Տերը հնարավորություն է տալիս մեզ զղջալու, ապաշխարելու, մաքրագործվելու եւ փրկություն գտնելու, քանզի Աստված իր զավակների փրկությունն է ցանկանում եւ ոչ թե կործանումն ու մահը:

Խաչելությունից եւ Հարությունից հետո Քրիստոսից ժառանգած իշխանությամբ ապաշխարությունն արդեն կատարում էին առաքյալները. «Առէ՛ք Սուրբ Հոգին: Եթէ մէկի մեղքերը ներէք, նրանց ներուած կը լինի. եթէ մէկի մեղքերը չներէք, ներուած չի լինի»[32]:

Գործք Առաքելոցը պատմում է, թե ինչպես առաքյալները Փրկչի ճշմարիտ խոսքը Սուրբ Հոգու զորությամբ տարածեցին ողջ աշխարհում եւ լուսավորեցին մարդկանց՝ մեղքերից կուրացած հոգիները, սիրով եւ ջերմեռանդորեն բացատրեցին եւ մեկնաբանեցին Տիրոջ ավան-

26 Մատթ. Դ 17:
27 Մատթ. Դ 12-14:
28 Մարկ. Ա 15:
29 Ղուկ. ԺԳ 3:
30 Հռոմ. Զ 23:
31 Յակոբ. Ա 13-16:
32 Յովհ. Ի 21-23:

դածը[33]: Տիրոջ առաքյալները եւս մեծ կարեւորությամբ քարոզեցին եւ հանձնարարեցին իրենց հետեւորդներին ապաշխարել եւ զղջալ, քանզի մեղքը մարդուն հեռացնում է Աստծուց, միւսդեռ ապաշխարությունը մոտեցնում է Նրան: Ապաշխարողը Քրիստոսի բարեխոսությամբ եւ սիրով մեղքերի թողություն է ստանում: Հովհաննես առաքյալն ասում է. «Որդեակնե՛ր իմ, այս բանը գրում եմ ձեզ, որպէսզի չմեղանչէք. իսկ եթէ մէկը մեղանչի, Աստծու առաջ բարեխօս ունենք Յիսուս Քրիստոսին՝ Արդարին եւ Անարատին. եւ նա՛ է քաւութիւնը մեր մեղքերի, եւ ոչ միայն մեր մեղքերի, այլեւ՝ ամբողջ աշխարհի»[34]: Մեսիան հաստատեց ապաշխարությունը եւ պատվիրեց ի գործ դնել՝ ցանկանալով, որ այն դառնա մեղավոր հոգիները Աստծո հետ հաշտեցնելու ուղի:

Հայտնի է նաեւ, որ առաքյալները ձեռնադրեցին եպիսկոպոսներ եւ քահանաներ, որոնք եւ նրանցից հետո դարձան «խորհրդակատարներ»: Եկեղեցագիտական եւ պատմագիտական վավերագրերը վկայում են, որ Բ դարավերջին եւ Գ դարասկզբին Ապաշխարության խորհրդի ներքին կառուցվածքը, վարդապետական եւ աստվածաբանական բովանդակությունը հստակեցված էին, սակայն խորհրդի կատարման ծիսական կողմն ու առանձնահատկությունները հազիվ էին նշմարվում:

Քրիստոսի խաչելությամբ իրագործված փրկագործությունը շարունակվում է առաքյալների, ապա Եկեղեցու միջոցով: Պետրոս առաքյալի խոսքերով՝ Եկեղեցու փրկագործական նկարագիրը «սուրբ քահանայությունն է», որի հիմնական նպատակը մարդու փրկությունն է: Իր փրկագործական առաքելությունը Եկեղեցին իրագործում է Խորհուրդների եւ աստվածապաշտական արարողությունների միջոցով, որոնցով մարդ-անհատը դառնում է Եկեղեցու անդամ եւ հաղորդակցվում աստվածային փրկագործությանը: Քրիստոսի մարմինը՝ Եկեղեցին, զորացնում է հավատքը եւ փրկության շնորհ է տալիս իր անդամներին: Եկեղեցին Քրիստոսի ներկայությունն է այս աշխարհի վրա, եւ այդ ներկայությունը կենդանի, վավերական եւ ամբողջական է Խորհուրդներով[35]:

Ապաշխարության խորհուրդի ձեւավորման համար եկեղեցական որեւէ կարգադրություն կամ որոշում հիմք չի ծառայել, այդ իսկ պատճառով չենք կարող հստակ ասել, թե երբ է այն ձեւավորվել: Սակայն հիմնվելով Նոր Կտակարանի վրա՝ կարող ենք պնդել, որ ապաշխարությունը հաստատել է Հիսուս Քրիստոսը, եւ այն կիրառվել է առաքելական շրջանից: Գործք Առաքելոցի ԺԹ գլուխը վկայում է, որ առաքելական շրջանում արդեն իսկ խոստովանանքն ու ապաշխարությունը լայն տարածում էին գտել: Սուրբ Ամբրոսիոսը Սաղմոսաց գրքի ԼԸ գլխի մեկնության մեջ գրում է. «Այն ամենը, ինչ մովսիսական օրէնքով Աստծու դատաստանին էր վերապահում, Քրիստոսը առաքեալների դատին յանձնեց»[36]:

Եկեղեցին աշխատել է Ապաշխարության խորհրդի կատարման կարգը համապատասխանեցնել պատմական ժամանակաշրջանի հոգեւոր, հասարակական, պատմամշակութային պահանջներին՝ մշակելով առավել ընդունված եւ գործածելի համակարգ[37]: Ի

33 Տե՛ս Գործք ԺԹ:

34 Ա Յովհ. Բ 1-3:

35 Տե՛ս «Գանձասար», Ա, 1992, էջ 62:

36 **Ն. Թերճիմանեան,** Խորհրդական Խոստովանութիւն, էջ 18:

37 Տե՛ս **Филарет архиепископ Черниговский**, Православное Догматическое богословие, изд. III, Чернигов, 1882, էջ 74:

տարբերություն դավանաբանական անփոփոխ բանաձեւումների՝ ծիսապաշտամունքային համակարգին եւ Խորհուրդներին վերաբերող հարցերում Եկեղեցին առաջնորդվել է «խելամիտ ազատասիրությամբ»[38], ընտրել է արարողակարգի նոր եղանակներ՝ նկատի ունենալով դրանց բարերար ազդեցությունը հավատացյալների վրա եւ երբ համոզվել է, որ հներն արդեն ազդու չեն, փոփոխել է դրանք՝ մշակելով նորերը: Եկեղեցական նշանավոր հայրեր Օգոստինոսն ու Հովհան Ոսկեբերանը իրենց աշխատություններում անդրադարձել են ապաշխարանքին եւ իրենց տեսակետները հիմնավորել Փրկչի քարոզներով: Նույնկերպ եւ Բարսեղ Կեսարացին իր կանոնների մեջ գրում է. «Պետք է խոստովանել նրանց, ում Քրիստոսը իշխանություն տուեց ասուածային խորհուրդները կատարելու»[39]: Իսկ Ս. Հերոնիմոսը Մատթեոսի Ավետարանի ԾԱ գլխի մեկնության մեջ նշում է. «Ինչպես եպիսկոպոսը, նույնպես եւ քահանան կապում կամ արձակում էր մեղքերը...»[40]: Այսինքն, Քրիստոսի տված իշխանությամբ եւ պատվերով մեր մեղքերի թողությունն ենք գտնում քահանայի (օծյալ հոգեւորականի) խորհրդական արձակմամբ: Ինչպես փակված տունը ոչ ոք չի կարող մտնել, բացի նրանից, որ բանալին ունի, նույնպես եւ մեղքերի առջեւ փակված երկնային դուռը միայն քահանայական սպասավորություն ունեցողը կարող է բացել: Եւ ըստ աստվածային կարգադրության՝ երկնքի դռները կարող են բացել նրանք, որոնց տրվեց հոգեւոր իշխանություն:

Վաղ շրջանում Եկեղեցում կիրառվել է ապաշխարանքի երկու ձեւ՝ հրապարակային եւ առանձնական կամ անհատական: Հրապարակային խոստովանությունը կատարվում էր եպիսկոպոսի առջեւ՝ ողջ հավատացյալ համայնքի ներկայությամբ: Ապաշխարանքի այս ձեւը նախատեսված էր քրիստոնեական համայնքի այն անդամների համար, որոնք գործել էին «ծանր մեղքեր»՝ Եկեղեցու հեղինակությունը ոտնահարող եւ հավատացյալներին մոլորեցնող: Առաքելական շրջանից հայտնի է կորնթացի մեղսագործի ապաշխարության օրինակը: Վերջինս Պողոս առաքյալի հրահանգով զրկվեց Եկեղեցու հաղորդակցությունից, քանզի. «Լավ չեն ձեր այդ պարծանքները. չգիտե՞ք, թէ մի փոքր թթխմոր ամբողջ զանգուածը խմորում է: Մաքրեցէ՛ք, դէ՛ն նետեցէք հին խմորը, որպէսզի նոր զանգուած լինէք, առանց թթխմորի. քանզի Քրիստոս՝ մեր զատիկը, մորթուեց: Ուրեմն, տօն կատարենք ոչ թէ հին խմորով եւ չարութեան ու անզգամութեան խմորով, այլ՝ ստուգութեան եւ ճշմարտութեան անթթխմոր հացով»[41]:

Մեղսագործի երկարատեւ ապաշխարանքից եւ իրական զղջումից հետո միայն Պողոս առաքյալը նրան կրկին ընդունեց Եկեղեցու գիրկը, որովհետեւ. «Այնպիսի մէկի համար բաւական է այն պատիժը, որ տրուեց շատերից. այնպէս որ, դրան հակառակ, դուք պէտք է ներէք նրան եւ միխիթարէք, որպէսզի չափազանց տրտմութիւնից չխորտակուի նա: Ուստի, աղաչում եմ ձեզ նրա հանդէպ վերստին սէր ցոյց տալ»[42]:

Հրապարակային ապաշխարությունը համարվում էր իրապես զղջացողների բժշկում եւ դաս՝ քրիստոնեական համայնքի մյուս անդամների համար: Վաղ Եկեղեցում հետեւյալ երեք մեղքերից՝ կռապաշտություն, սպանություն, անառակություն, որեւէ մեկի մեջ մեղադրվողը

38 Տե՛ս **П. Г. Нефодов**, Таинство и обряды православной Церкви, Москва, 1995, էջ 117:
39 **Հ. Թերճիմանեան,** նշվ. աշխ., էջ 18:
40 Տե՛ս անդ:
41 Ա Կորնթ. Ե 6-8:
42 Բ Կորնթ. Բ 6-9:

զրկվում էր Եկեղեցու հաղորդակցությունից: Ապաշխարողների համար սահմանված էին նաև որոշակի պատիժներ (եպտիեմիաներ)՝ զրկում էին Եկեղեցուն նվիրատվություն կատարելու եւ հաղորդակցվելու իրավունքից, արգելում էին եկեղեցական եւ համայնական ժողովներին մասնակցել, ծիսական արարողություններին եւ Խորհուրդներին ներկա գտնվել: «Եկեղեցուց արտաքսումը» համարվում էր ծանրագույն պատիժ եւ կիրառվում էր այն մեղքերի համար, որոնք կատարվում էին գիտակցաբար, կամքի ազատ դրսեւորմամբ եւ ոչ թե կարիքներից դրդված, անգիտությամբ եւ ճնշման ներքո: Համայնքից հեռացնելիս հիմնվում էին ոչ միայն ապաշխարողի խոստովանանքի, այլ նաեւ մյուսների հավաստի վկայությունների եւ տվյալների վրա: Այդ հավատացյալի անունը հեռացվում էր քրիստոնեական համայքի անդամների ցուցակից՝ դիպտիխներից, իսկ մյուս հավատացյալներին արգելվում էր որեւէ տեսակի հաղորդակցություն եւ շփում նրա հետ: Քրիստոնեական համայքից արտաքսվածին ներում էր շնորհվում միայն իրական զղջումից եւ երկարատեւ ապաշխարանքից հետո[43]:

Հրապարակային խոստովանանքը լայն տարածում է գտել Գ դարի առաջին կեսին Դեկոս կայսեր (249-251 թթ.) հալածանքների հետեւանքով: Քսան տարվա անդորրից հետո քրիստոնյաների նկատմամբ հալածանքները վերսկսվեցին առանձնակի դաժանությամբ, ինչի հետեւանքով բազմաթիվ հավատացյալներ ուրացան իրենց հավատքը, զոհեր մատուցեցին կուռքերին, հրաժարվեցին քրիստոնեական դավանանքից: Հալածանքների ավարտից հետո ուրացողները փորձեցին կրկին վերադառնալ քրիստոնեական Եկեղեցի: Նրանք իրենց ուրացությունը համարում էին ստիպողաբար, հալածանքների երկյուղի ներքո պարտադրված, ուստի գտնում էին, որ կարող են անպատիժ մնալ եւ անարգել կերպով կրկին Եկեղեցի վերադառնալ: Որոշ հոգեւորականներ առանց արգելքների եւ պատիժների նրանց եւ էին ընդունում, ինչը հանգեցնում էր քրիստոնեական բարոյական համակարգի արժեզրկման:

Կարթագենի եկեղեցում քարոզիչ Լուկիանոսը ուրացողներին թողություն տալու մասին իր տեսակետները արտահայտեց, որոնք Կիպրիանոս Կարթագենացու անհաշտ հակառակորդներից Ֆելիքսիմը կիրառեց իր գործունեության մեջ:

Իսկ Կիպրիանոս Կարթագենացին հակադրվեց այն հոգեւորականներին, որոնք մասնավոր կարգով քննում էին ուրացողներին եւ անարգել եւ ընդունում Եկեղեցի: Ըստ Կիպրիանոսի՝ ապաշխարանքը պետք է երկարատեւ եւ գիտակցված գործընթաց լիներ. ուրացողը պետք է զղջար, խոստովաներ, մաքրագործվեր, աղոթեր, որոշակի ապաշխարանք կրեր, որից հետո միայն եւ ընդունվեր քրիստոնեական համայնք, մասնակցեր եկեղեցական կյանքին, Հաղորդության խորհուրդին. «Ահա թէ ինչու, ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանօրէն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին եւ արեանը: Թող մարդ նախ ինքն իրե՛ն փորձի եւ ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետեւ, ով ուտում է եւ խմում անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում եւ խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ մարմինը»[44]:

Ապաշխարության խնդրի շուրջ ծավալված վիճաբանությունները աստիճանաբար սրվում էին: Այսպես՝ Նովացիանոս երեցը պնդում էր, որ ոչ միայն ծանր մեղքեր գործողնե-

43 Տե՛ս "Покаяние в древней христианской Церкви ". "Воскресное чтение", т. 9, Москва, 1912, էջ 105:
44 Ա Կորնթ. Ա 27-30:

բին չպետք է կրկին եւ ընդունել Եկեղեցի, այլ նաեւ բոլոր նրանց, որոնք առաջին ապաշխարությունից հետո կրկին մեղք էին գործել: Նովացիանոսը գտնում էր նաեւ, որ Եկեղեցին չպետք է իր գիրկն ընդունի «պիղծերին» եւ մեղսագործներին, որոնք իրենց արատավոր վարքով կարող են «վարակել» առավել մաքրակենցաղ հավատացյալներին: Նրա կարծիքով առավել խելամիտ կլիներ մեղսավորների ներումը վերապահել միայն Աստծուն, քանզի ծառան չի կարող ներել նրանց, որոնք մեղք են գործել իր Տիրոջ դեմ: Նովացիանոսի հետեւորդներն իրենց համարում էին «մաքրակենցաղների» բացառիկ համայնք[45]: Նովացիանոսի տեսակետները ծայրահեղ պահպանողական էին, հակադրվում էին քրիստոնեական ներողամտությանն ու ողորմածությանը, մեղսավորներին Աստծո եւ Եկեղեցու հետ հաշտվելու որեւէ հույս չէին թողնում, ուստի եւ պաշտպանություն չգտան: Նովացիանոսի դիսցիպլինար վիճաբանությունից հետո ծավալվեցին մոնտանականների եւ մելիտինականների վիճաբանությունները՝ առաջինները պահանջում էին մեղսավորների նկատմամբ խիստ վերաբերմունք, իսկ երկրորդները՝ ներողամտություն:

Այս վիճաբանությունները հարթելու համար 251թ. հրավիրվեց Կարթագենի եկեղեցական ժողովը, որի ընդունած որոշումների համաձայն՝ պետք է ներում եւ մեղքերի թողություն շնորհվեր բոլոր նրանց, որոնք ունեին ճշմարիտ հավատք, իրապես զղջում էին, խոստովանում, փորձում քավել իրենց մեղքերը եւ դրանք այլեւս չկրկնելու հաստատակամություն էին ցուցաբերում: Կարթագենի եկեղեցական ժողովը վերականգնեց « ապաշխարության միջոցով մեղսավորներին վերակենդանացնելու եւ բժշկելու» կարգը[46]: Եկեղեցական այս ժողովի որոշումներն առանց առարկումների ընդունեց նաեւ Հռոմի 251թ. եկեղեցական ժողովը: Այսպիսով այս դիսցիպլինար վիճաբանությունը հարթվում է, եւ հաստատվում է Ապաշխարության խորհրդի արարողակարգը: Լառդիկեի 366 թ. եկեղեցական ժողովի երկրորդ կանոնը ամրագրում էր խոստովանողների համար մեղքերին համապատասխան ապաշխարանքի սահմանումը[47]: Պատիժը պետք է համապատասխաներ գործած մեղքին: Այս մասին Կիպրիանոսը գրում է. «Որքան մենք մեղք ենք գործում, այնքան էլ պետք է արտասվենք: Խորը վերքը երկարատեւ ապաքինում է պահանջում: Ապաշխարանքը մեղքից թեթեւ չպետք է լինի»[48]: Ինչպես որ մարդը քահանայից մկրտվելով լուսավորվում է Սուրբ Հոգով, այնպես իր մեղքերը խոստովանողը քահանայի միջնորդությամբ թողություն է գտնում: Պետք է նշել, որ պատժի ձեւը եւ ապաշխարանքի տեւողությունը կախված էր ոչ միայն մեղքի ծանրությունից, այլ նաեւ այն գործելու պատճառներից եւ պայմաններից:

Սկսած Դ դարից, երբ քրիստոնյաների նկատմամբ հալածանքները ավարտվեցին, հրապարակային ապաշխարանքի կարգն իր տեղը աստիճանաբար զիջեց առանձնական ապաշխարությանը, չնայած որոշ համայնքներում ապաշխարության հրապարակային ձեւը պահպանվեց մինչեւ Է-Թ դարերը: Ավելի ուշ խոստովանության առանձնական եւ հրապարակային ձեւերը սկսեցին փոխարինել կամ լրացնել մեկը մյուսին: Հրապարակային խոստովանանքը, չնայած իր դրական ազդեցությանը, ներառում էր որոշակի վտանգավորություն:

45 Տես **В. В. Болотов,** Лекции по истории Древней Церкви, т.II, Минск, 2008, էջ 128:
46 Տես "О публичном покаянии. Православный Собеседник", ч. 1, Казан, 1868, էջ 124:
47 Տես **Ն. Թերճիմանեան,** Խորհրդական Խոստովանութիւն, էջ 28:
48 Տես "Покаяние в древней христианской Церкви", т. 9, էջ 106-107:

Ողջ համայնքի ներկայությամբ բացահայտ խոստովանությունը կարող էր մեղքի սերմեր գցել մյուս հավատացյալների հոգում: Լսելով մյուսների գործած մեղքերի մասին՝ մարդիկ հաճախ իրենց առավել կատարյալ էին համարում խոստովանողից, ինչն ու հանգեցնում էր գոռոզամտության ու հպարտության: Բացի այդ որոշ քրիստոնյաներ, երկյուղելով շրջապատի քննադատությունից, հանդիմանանքներից ու ատելությունից, հաճախ թաքցնում էին իրենց գործած ծանր մեղքերը: Կոստանդնուպոլսի պատրիարք Նեկտարիոսը ընդգծում էր, որ հրապարակավ խոստովանությունը որևէ մեկին չպետք է պարտադրվի, այլ այն պետք է իրականացվի հավատացյալի կամքով ու խղճի թելադրանքով: Այս ամենի հետևանքով ապաշխարության հրապարակային կարգը իր տեղը հետզհետե զիջում էր անհատական ապաշխարանքին[49]: 692 թ. գումարված Կ. Պոլսի Գ տիեզերական ժողովի 102-րդ կանոնը ևս սահմանում էր ապաշխարության կարգը: Տարբեր ժամանակաշրջաններում եկեղեցական տարբեր ժողովներ սահմանել ու հաստատել են ապաշխարության արարողակարգին վերաբերող կանոններ:

Արդեն Թ դարավերջում հրապարակային խոստովանանքը գրեթե ամենուր փոխարինվեց անհատական ապաշխարանքով:

Ապաշխարության խորհրդի կարևորագույն տարրերն են իրական, գիտակցված զղջումն ու անկեղծ խոստովանությունը: Տերտուլիանոսն այս մասին գրում է. «Ո՛վ մեղսագործ, հույսդ դիր ապաշխարության վրա, կառչի՛ր դրանից, ինչպես նավաբեկյալը փրկարար տախտակից: Այն քեզ դուրս կբերի մեղքերի անդունդից ու կհասցնի ասպվածային ողորմածության նավահանգիստը»[50]:

Ըստ եկեղեցական հայրերի՝ ապաշխարությունը պետք է տարբերել խոստովանությունից, քանզի առանց անկեղծ խոստովանության չի կարելի ապաշխարել, ու առանց անկեղծ զղջման ու խոստովանանքի ապաշխարությունն արժեզրկվում է: Ահա թե ինչ է գրում Սուրբ Իսոկենտիոսն այս մասին. «Ապաշխարությունն ու խոստովանությունը նույն կերպ չպետք է հասկանալ. ապաշխարությունը մի բան է, խոստովանությունը՝ մեկ այլ... Աստծո առջև անհրաժեշտ է մշտապես խոստովանել մեղքերը: Ապաշխարությունն ու անկեղծ զղջումը մարդուն մոտեցնում են երկնային արքայությանը ու Սուրբ Հոգուն, իսկ խոստովանությունն առանց զղջման ու ապաշխարանքի բնավ օգուտ չի բերում մարդուն, այլ ձևական ու կեղծ խոստովանությունը կործանում է նրան՝ դարձնելով առավել հանցագործ»[51]:

Եկեղեցու պատմության վաղ շրջանից սկսած հավատացյալները խոստովանում էին իրենց մեղքերը օծյալ հոգևորականի առջև, որը լսում էր նրանց, խորհուրդներ տալիս, ասպվածահաճ ուղի մատնանշում ու արձակում մեղքերից: Առանձնական ապաշխարության մասին Ս. Կղեմես Հռոմեացին գրում է. «Եթե որևէ մեկի սրտում թաքնված է նախանձ, անազնվություն կամ այլ չարիք, ապա սեփական հոգու փրկության մասին մտահոգվողը չպետք է երկյուղի դրանք խոստովանել հոգևորականին, քանզի նրանից Աստծո փրկարար խոսքի ու կենարար աղոթքի միջոցով կբժշկվի»[52]: Սուրբ Կղեմես Հռոմեացին իր առ Կորն-

49 Տե՛ս **П. Г. Нефодов**, Таинства и обряды православной Церкви, էջ 120 :

50 “О покоянии.-Богословские труды”, сб. 26, Москва, 1985, с. 226.

51 «Քրիստոնյա Հայաստան», 2001, դեկտ. Ա, թ. 23, 115, էջ 8:

52 “О покоянии.-Богословские труды”, с. 228.

թացիս Բ թղթի մեկնության մեջ ապաշխարանքի անհրաժեշտության մասին գրում է նաև. «Քանի դեռ այս աշխարհում ենք, պետք է զղջանք ողջ սրտով եւ հրաժարվենք մեղքերից, որոնք մարմնով գործեցինք... քանի որ այս աշխարհից հեռանալուց հետո չենք կարող ո՛չ խոստովանել, ո՛չ ապաշխարել»[53]:

Անկյուրիայի 314 թ. եկեղեցական ժողովի V կանոնը վերաբերում էր Ապաշխարության խորհուրդը կատարող հոգեւորականներին, որոնք մեղքերին թողություն տալու իրենց իրավունքն ու իշխանությունը ժառանգել էին առաքյալներից: Ե դարի եկեղեցական պատմիչ Սոզոմենը ապաշխարության մասին գրում է.«Ասված պատվիրել է ներել մեղսագործներին եւ ապաշխարողներին: Սակայն ներման եւ թողության արժանանալու համար անհրաժեշտ է խոստովանել սեփական մեղքերը, եւ այդ նպատակով հնուց ի վեր ձեռնադրվել են հոգեւորականներ՝ աչքի ընկնող իրենց մաքրակեցությամբ եւ խիստ գաղտնապահությամբ»[54]: Ըստ եկեղեցական հայրերի՝ խոստովանահայրը պետք է օժտված լիներ որոշակի արժանիքներով՝ առաքինությամբ, հեզությամբ, պարկեշտությամբ, խոհեմությամբ, գաղտնապահությամբ եւ այլն: Այս մասին Որոգինեսը գրում է. «Զգույշ եղի՛ր եւ քո անօրինությունները խոստովանելու համար ջանա այնպիսի մեկին գտնել, որը գիտե հիվանդների հետ հիվանդ լինել, լացողների հետ արտասվել եւ կարեկից ու ցավակից լինել»[55]:

Ե-Զ դարերում Ապաշխարության խորհրդի ծիսակարգում միակերպություն հաստատելու անհրաժեշտություն առաջացավ: Զ դարի վերջում ձեւաւորվեց առանձնական ապաշխարության արարողակարգը, եւ այս գործում մեծ դերակատարում ունեցավ Հովհան Անապատականը (596 թ.): Վերջինիս անունով հայտնի է «Նոմոկանոնը»: Այս շրջանում համակարգվում է Ապաշխարության խորհրդի արարողակարգը, հաստատվում գղջման եւ թողության աղոթքների հաջորդականությունը: Հովհան Ճգնակյացն իր մշակած ծիսակարգում անդրադառնում էր նաեւ նախաապաշխարական աղոթքներին, հոգեւորականի առջեւ մեղքերի խոստովանության կարգին, հովվական խորհուրդներին եւ թողության աղոթքներին: Սակայն Հովհան Վանականի մշակած ծիսակարգը իր բովանդակությամբ չափազանց ընդարձակ էր եւ ոչ բոլոր Եկեղեցիներում էր կիրառվում: Հիմք ընդունելով «Նոմոկանոնը»՝ տարբեր վայրերում եկեղեցական հայրերը մշակեցին Ապաշխարության արարողակարգին վերաբերող կանոններ, որոնք կրում էին նաեւ տեղական ավանդույթների, սովորույթների, ծիսական համակարգի ազդեցությունը: Վերոնշյալ կանոնների մեջ առավել հայտնի է Ը դարում մշակված եւ գործածված «Ապաշխարության կանոն»-ը, որի հեղինակն է Կոստանդնուպոլսի սրուդիտյան վանքի վանահայր Թեոդոր Սրուդիտը: Այս կանոնադրության մեջ մանրակրկիտ մշակվել էին Ապաշխարության խորհրդի բաղկացուցիչ բոլոր տարրերը: Անհատական ապաշխարության մեջ կարեւորվում էր հոգեւորականի եւ հավատացյալի միջեւ փոխադարձ վստահությունը: Հավատացյալը պետք է լիովին վստահ լիներ, որ հոգեւորականը բացարձակ գաղտնի կպահեր իր խոստովանությունը: Այդ իսկ պատճառով քրիստոնեական բոլոր Եկեղեցիներում մշակվում եւ սահմանվում են այս խնդրին վերաբերող կանոններ, որոնցով կարգալույծ էին արվում հավատացյալի խոստովանությունը հրապարա-

53 **Ն. Թերճիմանեան,** նշվ. աշխ., էջ 24:
54 "Писания отцов и учителей Церкви", т. 1, Москва, 1863, с. 140.
55 **Ն. Թերճիմանեան,** նշվ. աշխ., էջ 25:

կող հոգեւորականները: Անհատական խոստովանանքը ընդգրկում էր դատիարակչական եւ հոգեբանական բազմաթիվ դրական ազդակներ եւ տարրեր, ամրապնդում էր հավատացյալ-հոգեւորական-Եկեղեցի կապը: Սակայն ճշմարտության առջեւ մեղանչած չլինելու համար նշենք, որ անհատական ապաշխարությունը հաճախ կիրառվել է նյութական միջոցներ ձեռք բերելու նպատակով:

Ե-Թ դարերում Կաթոլիկ Եկեղեցում առավելապես կիրառվում էր առանձնական ապաշխարությունը, որն ամբողջական եւ համակարգված տեսք էր ստանում իր ծիսական կարեւորագույն տարրերով եւ ասպվածաբանական դրույթներով: Եկեղեցական մեծ սխիզմից՝ 1054 թ. հետո Կաթոլիկ Եկեղեցում ինդուլգենցիայի համակարգը առավել ուռճացավ, ինչն ավելի ուշ՝ ԺԶ դարում դարձավ Բողոքական եկեղեցու ձեւավորման արտաքին պատճառներից մեկը: Ասպվածապետական կարգերի ձեւավորմանը զուգընթաց Արեւմտյան Եկեղեցում ինդուլգենցիայի համակարգը ԺԱ-ԺԲ դարերում դարձավ պապականության նյութական դիրքերն ամրապնդելու միջոց: Ի տարբերություն վաղ քրիստոնեական շրջանի, ԺԱ-ԺԲ դարերում Կաթոլիկ եկեղեցին հավատացյալներին ինդուլգենցիայի համակարգով հնարավորություն տվեց որոշակի գնացուցակի համաձայն վճարումներ կատարել եւ մեղքերի թողություն ստանալ: Այս արատավոր երեւույթի դեմ դուրս եկան բողոքական շարժման ղեկավարները, արեւմտյան ասպվածաբանական մտքի բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք ձգտում էին վերականգնել քրիստոնեական Եկեղեցու բարոյական արժեքները: ԺԵ-ԺԶ դարերի բողոքական շարժումից եւ ծավալված ընդդիմությունից հետո Կաթոլիկ եկեղեցին ստիպված եղավ վերանայել իր մոտեցումները: Սակայն Կաթոլիկ Եկեղեցում մինչ օրս առավել տարածված է առանձնական ապաշխարությունը:

Ապաշխարել նշանակում է ապա-աշխարել, այսինքն՝հետո լալ, ողբալ, կատարած մեղքի համար զղջալ եւ գործած չարիքի դիմաց որոշակի պատիժ կրել:

Հայ Եկեղեցու հայրերն ու հոգեւորականները ի սկզբանե մեծ ուշադրություն են դարձրել Սուրբ Պատարագի եւ Խորհուրդների կատարմանը: Ապաշխարության խորհուրդով առավել ակնհայտ է դրսեւորվում քրիստոնեական մարդասիրությունը, ներողամտությունն ու ողորմածությունը, ավելին՝ այս Խորհուրդն ունի նաեւ հոգեբանական եւ դատիարակչական նկարագիր: Ուստի մեր Եկեղեցու հայրերը մեծ կարեւորություն են տվել Ապաշխարության խորհուրդի ծիսակարգի մշակմանը: Այդ են վկայում արդեն Դ դարում շարադրված ապաշխարական աղոթքներն ու շարականները: Իսկ Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեանը»-ը նկարագրում է անկյալ մարդու տառապանքը, հոգեվիճակը, տվայտանքը, զղջումը, աղաչանքներն ու աղոթքները, Աստծո հետ հաշտվելու հույսը: Վաղ շրջանում Հայ Եկեղեցում եւս կիրառվել են խոստովանանքի հրապարակային եւ առանձնական կարգերը: Անհատական ապաշխարության ժամանակ հավատացյալն իր մեղքերը առանձնաբար խոստովանում էր հոգեւորականին: Դվինի Բ եկեղեցական ժողովի (554 թ.) ԺԹ կանոնի համաձայն կարգալույծ էր հռչակվում այն քահանան, որն իրեն գաղտնի խոստովանած մեղքերը հայտնում էր. «Եթէ ոք ի քահանայից յայտնեսցէ երբեք զբանս ապաշխարութեան ապաշխարողացն, նզովիւք լուծցի, եւ ամէն իրաւունք ջնջեսցի ի քահանայական ժառանգութենէ»[56]: Իսկ նույն ժողովի ԺԸ կանոնը արգելում է քահանաներին վարձ վերցնել խոստովա-

56 «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, Եր., 1964, էջ 240:

նողից: Նմանապիպ բազմաթիվ կանոններ են մշակել Հայ Եկեղեցու հայրերը, որոնք ջանացել են պահպանել քրիստոնեական բարոյական արժեքները: Հետագայում մեր Եկեղեցում անհատական կամ առանձնական խոստովանությունը փոխարինվել է հրապարակային կամ հավաքական խոստովանությամբ: Հրապարակային խոստովանության ձեւ է Հայ Եկեղեցում պատարագիչ եկեղեցականի՝ Ս. Պատարագից առաջ, նախքան խորան բարձրանալը ներկաներից հրապարակավ թողություն խնդրելը. «Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ առաջի ձեր, հա՛րք եւ եղբա՛րք, զամենայն մեղս, զոր գործեալ եմ...» (Ժամագիրք): Հրապարակային խոստովանությունը ժողովրդի ներկայությամբ անձնական մեղքերի հայտարարությունն է: Հոգեւորականների համար եւս պարտադիր է խոստովանությունը:

Հայ Եկեղեցու վարդապետության համաձայն՝ խոստովանությունը կատարվում է Եկեղեցում, Աստծո պաշտոնյայի՝ խոստովանահոր ներկայությամբ: Միայն ձեռնադրված հոգեւորականն է, որ իրավունք ունի մեղքերի թողություն տալու: Նախքան հաղորդությունը հավատացյալները ծնկի են գալիս քահանայի առջեւ, եւ վերջինս ընթերցում է Ժամագրքի սկզբում «Ջղջման» վերնագրով մեղանների շարքը, որը սկսվում է «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» աղոթքով: Հավատացյալները յուրաքանչյուր բաժնի ավարտին «Մեղայ Աստծոյ» խոսքերն են կրկնում: Քահանան ի պատասխան ասում է. «Աստված թողութիւն շնորհեսցէ»: Ապա ընթերցվում են Ապաշխարության սաղմոսները: Քահանան աղոթում է, որ Աստված լսի մեղավորի աղաչանքն ու խոստովանությունը՝ դարձնելով նրան Սուրբ Հոգու տաճար: Ապա ընթերցում է Եսայի մարգարեից՝ Ա 16-20, Եզեկիել մարգարեից՝ ԺԸ 21-23, Եփեսացիների թղթից՝ Ջ 10-24 համարները եւ «Անառակ որդու» առակը (Ղուկ. ԺԵ 11-32), որից հետո արեւմուտք դառնալով՝ երեք անգամ արտասանում է «Հրաժարիմքը»: Այնուհետեւ բոլորը շրջվում են դեպի արեւելք եւ ասում դավանության խոստովանությունը՝ «Հաւատամքը»: Այդ ամենից հետո միայն ապաշխարողը՝ մաքրված եւ թողություն ստացած, պատրաստվում է Հաղորդություն ստանալու:

Հայ Եկեղեցին շաբաթվա մեջ երկու օր՝ չորեքշաբթի եւ ուրբաթ, որոնք պահոց օրեր են, համարում է նաեւ ապաշխարության օրեր: Մեծ Պահքը նաեւ Ապաշխարության շրջան է: Նախկինում Հայ Եկեղեցին ապաշխարության հատուկ օր ուներ, որն Ավագ հինգշաբթին էր, երբ կատարվում էր «Կարգ ապաշխարողաց» ժամերգությունը, ապա տեղի է ունենում Սուրբ Պատարագ: